

նից կարելի է հետևեցնել, որ վէպի անդադար քաղաքէ քաղաք, երկրէ երկիր չըջող Թեաթորոսը, Առիւծաձև Մհերի աները, (Գ. Սար. 22—23) Թէոդորոս Ռշտունին է, որի անուան նմանութիւնն եւ ակներե է: Սասմայ ծուերից մնացեալները, որոնք պատմական անձեր են դժուարանում ենք առայժմ որոշել, յետոյ առիթ կունենանք թերեւ աւելի խօսելու. նկատենք միայն Խոր-Գուսանը (Սրուանձաւ-Պատկան, Գ. 7. Ը, 24) յիշեցնում է մեզ Նիբելունգների Ֆուկէր Ալցէյցի երգիչը:—Այս բոլորից պարզ երևում է որ վէպի միջուկը կենտրոնը կազմում է արաբական և թուրք—թաթարական կամ մահմեդականութեան շրջանը:

ՍՏԵՓԱՆ ԿԱՆԱՅԵԱՆՑ

11 Մարտի. 1906

Վաղարշապատում.

ԶԷՄՍ*)

ԺԱՄԱՆԱԿԻ ԶԳԱՅՈՒԹԻՒՆԸ

1. Ներկայի զգայութիւնը որոշ տեսողութիւն ունի: Փորձ արէք, էլ չեմ ասի նկատել, այլ նշմարել և հետամտել ժամանակի ներկայ վարկեանը: Այդպիսի փորձը կատարելապէս ապարդիւն կանցնի: Ո՞ւր է այդ ներկայ ասածդ: Անհետացել—չքացել է նախ քան մեր ըմբռնել կարողանալը, փոխանցել յաջորդող վարկեանին: Հօջսնի վկայութիւն բերած բանաստեղծը ասում է «Այն ակնթարթը, երբ ես խօսում եմ, արդէն հեռու է ինձանից»:

Եւ իրօք, ներկան, բառիս բուն առմամբ, մարդ ըմբռնել կարող է միմիայն իբրեւ մի մաս կենդանի շարժուն, մի մաս օրգանիկ պրօցեսով լեցուն՝ աւելի ընդարձակ մի ժա-

*) Уильямъ Джемсъ. Психологія, переводъ съ англійскаго Лапшина. Глава XVII. Чувство времени. (աչբի առաջ է ունեցուել նոյն գրքի ռուսերէն նաև միւս թարգմանութիւնը—подъ редакц. Оболенскаго «Научныя основы психологія»).

մանակամիջոցի: Ներկան իսկապէս լոկ մի վերացութիւն է, որը ոչ միայն երբեք փորձում իբրեւ զգայութիւն կամ ըմբռնութիւն չէ իրականանում, այլ և, թերեւ, երբեք էլ հանդէս չէ դալիս մինչև անգամ իբրեւ մի գաղափար՝ փիլիսոփայական մտածողութեան անվարժ անձանց մոքում: Խորհրդածութիւնն է, որ մեզ համոզում է, թէ ներկան պէտք է որ գոյութիւն ունենայ, բայց նրա նոյն—ինքն գոյութիւն ունենալը երբեք չէ կարող մեզ համար անմիջական փորձի մի իրողութիւն լինել: Փորձը մեզ այն է տալիս, ինչը որ այնպէս լաւ «մտաւորապէս» ներկայ էին անուանել—ժամանակի մի հատուած, որի մէջ պարփակուած է մեր գիտակցութիւնը, և որից պատկերացնում ենք ժամանակի երկու հակադիր ուղղութիւնները՝ ժամանակի ըմբռնութեան մասերը միանում են երկու հակադիր ծայրեր ունեցող որոշ տեւողութեամբ: Յաջորդականութեան առնչութիւնները մի ծայրից դէպի միւսը ճանաչում են իբրեւ աւելցութեան առաջիկայ տրուած հատուածի մասեր: Ոչ թէ առաջ մէկ ծայրի ժամանեւն ենք զգում, ապա միւսինը, ոչ թէ յաջորդականութեան ըմբռնութիւնից եզրակացնում ենք, թէ այդ ծայրերի միջև ժամանակամիջոց կայ, այլ, ըստերեւոյթին, նոյն—ինքն ժամանակամիջոցն ենք զգում՝ իբրեւ երկու հակադիր ծայրեր ունեցող մի ամբողջութիւն: Փորձը, իբրեւ հոգեբանական վերլուծման առարկայ, բարդ բան է. նրա տարրերը զգայական ըմբռնութեան մէջ իրարուց անանջատելի են, թէև, մեր ուշքը փորձի երեւոյթների փոխանակման վրայ դարձնելով, հեշտութեամբ կարող ենք սկիզբն ու վերջը տարբերել:

Մի քանի վարկեանից աւելի տեւողութիւն ունեցող ժամանակամիջոցը դադարում է մեր գիտակցութեան համար տեւողութեան անմիջական ըմբռնութիւն լինելուց և մի մտացածին երեակայութիւն է դառնում: Նոյն իսկ մի ժամ ժամանակը գիտակցութեան առաջ իրականացնելու, ներկայացնելու համար պէտք է անվերջ համարենք «այժմ», «այժմ», «այժմ»: Իւրաքանչիւր «այժմ» ժամանակի մի որոշ առանձին միջոցի զգայութեան է համապատասխանում, իսկ

այդ միջոցների ճիշդ գումարը երբեք էլ պայծառ չենք գիտակցում: Ամենաերկարատև ժամանակամիջոցը, որին գիտակցութեամբ անմիջապէս ընդգրկել կարող ենք, տարբերելով այդ աւելի կամ պակաս տեղութիւն ունեցողներից, մօտաւորապէս 12 վարկեանի է հաւասար, (գատելով Վոնդի լաբօրատօրիայում ուրիշ նպատակով կատարուած փորձերի համաձայն): Ամենակարճատև ժամանակամիջոցը, որ կարող ենք զգալ, ըստերևոյթին, $\frac{1}{500}$ վարկեանի է հաւասար: Էքսները զատում էր մէկը միւսին այդքան ժամանակամիջոցում՝ յաջորդող երկու ելէքտրական կայծեր:

2. Դատարկ ժամանակի զգայութիւն չենք ունենում: Փորձեցէք փակել ուշքներդ, իսպառ կտրուել արտաքին աշխարհից և ուշքներդ միմիայն ժամանակի ընթացքին ուղղէք այն մարդու նման, որը, բանաստեղծի ասածով, «արթուն էր մնում, որպէսզի նշմարէ ժամանակի թռիչքը մօթ գիշերուայ մէջ և աշխարհի մօտենալը ահեղ դատաստանին»: Այդպիսի պայմաններում, ըստերևոյթին, ոչ մի զանազանակերպութիւն չկայ մեր մտքի նիւթական բովանդակութեան մէջ, և մեր անմիջական դիտողութեան առարկան կարծես հէնց նոյն ինքը ժամանակի ընթացքն է հանդիսանում: Արդեօք, այդպէս է իրօք, թէ ոչ: Այս կարևոր հարց է. որովհետև, եթէ ենթադրելու լինենք թէ փորձը տրուած գէպքում իսկապէս այն է, ինչ որ առաջին հայեացքից է թւում, ստիպուած կլինենք ընդունելու, որ մեր մէջ զուտ ժամանակի մի ուրոյն զգայութիւն կայ, որի գրգռիչը ոչնչով չլցուած տեղութիւնն է. իսկ եթէ ենթադրենք, որ այդ լոկ մի ցնորք է, ստիպուած պիտի ընդունենք, որ ժամանակի հոսանքի ըմբռնութիւնը վերահասարկուած օրինակում կախուած է նրանից, որ ժամանակը նախորդ վարկեանում իր ունեցած բովանդակութեան յիշողութեամբ է լցում և գիտակցում է այդ բովանդակութեան առաջիկայ թափէի բովանդակութեան նման լինելը: Ինքնադիտողութեան առանձին ջանքի հարկ չկայ ցոյց տալու համար, որ ճշմարիտը վերջին ենթադրութիւնն է:

և որ չենք կարող զիտակցել ոչ տեւողութիւն, ոչ էլ տարածութիւն առանց որեւէ գղայական բովանդակութեան: Ինչպէս որ փակ աչքերով տեսնում ենք, նոյնպէս էլ արտաքին աշխարհի տպաւորութիւններէց իսպառ կտրուելիս, դարձեալ սուղուած ենք լինում: Վսեմի տաած՝ մեր ընդհանուր գիտակցութեան «կիսալոյսի» մէջ: Արտի բաբախումը, շնչառութիւնը, մեր ուշադրութեան դարկը, երեւակայութեան միջով անցնող բառերի և խօսքերի կտորտանքը — ահա թէ ինչեր են լցնում մեր գիտակցութեան այդ մուշապատ աշխարհը: Բոլոր այս պրօցէսները ռիթմիկ են և գիտակցում են անմիջական ամբողջութեան մէջ. շնչառութիւնը և ուշադրութեան դարկը ելման և իջման պարբերական յաջորդականութիւն են ներկայացնում. նոյնը նկատուում է և սրտի բաբախման ժամանակ, միայն թէ այստեղ տատանման ալիքը համեմատաբար շատ աւելի կարճ է. բառերը մեր երեւակայութեան միջով անցնում են ոչ թէ հատ — հատ, այլ խումբ — խումբ: Կարճ ասած, ինչքան էլ որ աշխատէինք դատարկել մեր գիտակցութիւնը ամէն տեսակ բովանդակութիւնից, դարձեալ յաջորդման պրօցէսի մի տեսակը միշտ կը գիտակցուի, իբրեւ գիտակցութիւնից անբաժան մի տարր: Իսկ այդ պրօցէսի և դորա ռիթմի գիտակցման կից գիտակցում ենք նաեւ դրա բռնած, տեւած ժամանակամիջոցը: Այսպիսով, յաջորդման գիտակցումը ժամանակի հոսանքը գիտակցելու պայմանն է. բայց ոչ մի հիմք չկայ ենթադրելու, թէ բացարձակապէս դատարկ ժամանակի հոսանքը բաւական է մեր մէջ յաջորդականութեան գիտակցութիւն առաջացնելու: Պէտք է որ այդ յաջորդականութիւնը որոշ իրական երեւոյթ լինի:

3. Աւելի երկարատեւ ժամանակամիջոցների գնահատումը: «Դատարկ» ժամանակի հոսանքը («դատարկ», բառիս յարաբերական իմաստով, վերեւում յիշուածի համաձայն) գիտակցութեան մէջ գիտել աշխատելիս, հետամուտ ենք լինում՝ դրան մեր մտքում ընդհատումներով: Մեզ ու մեզ ասում ենք՝ «այժմ», «այժմ», «այժմ», կամ՝ «էլի», «էլի», «էլի», որքան որ ժամանակի հոսանքը ընթանում է. Տեւ-

դութեան այս որոշ միաւորներն գումարումը ժամանակի ընդհատ հոսման օրէնքն է։ Սակայն այս ընդհատութիւնը կախուած է լոկ ժամանակի ինչ լինելը ըմբռնելու կամ ապէրցեպցիայի ընդհատ լինելուց։ Իրօք, ժամանակի զգայութիւնը նոյնչափ անընդհատ է, որչափ ամէն մի ուրիշ նման զգայութիւն։ Մենք ենք, որ անուանում ենք անընդհատ զգայութեան զատ—զատ կտորները։ Մեր ամէն մէկ «էլիւն» նշանակում է անցնող կամ անցած ժամանակամիջոցի մի վերջնական մասը։ Հօջսոնի ասածով, զգայութիւնը—չափելու ժապաւէն է, իսկ ապէրցեպցիան բաժանիչ մեքենայ, որը նշանակում է ժապաւէնի վրայ միջոցները։ Անընդհատ—միօրինակ հնչիւնի ականջ դնելիս, ըմբռնում ենք այդ ապէրցեպցիայի ընդհատ զարկման օգնութեամբ, մտքներումս ասելով «նոյն հնչիւնն է», «նոյնն է», «նոյնն է»։ Նոյն բանն ենք անում նաեւ ժամանակի հոսանքը դիտելիս։ Ժամանակի միջոցները նշանել սկսելով շատ շուտ կորցնում ենք դրանց ընդհանուր գումարի տպաւորութիւնը, որը խիստ անորոշ է դառնում։ Այդ գումարը ճիշդ որոշել կարող ենք միայն համարելով, կամ հետեւելով ժամացոյցի սլաքների շարժումին, կամ օգտուելով ժամանակամիջոցը սիմբոլիկ կերպով նշանակելու որեւէ ուրիշ միջոցով։ Ժամերից և օրերից աւելի տեսողութիւն ունեցող ժամանակամիջոցների պատկերացումը կատարելապէս սիմբոլիկ է։ Որոշ ժամանակամիջոցների գումարի մասին մտածելիս կամ լոկ դրանց անունն ենք պատկերացնում, կամ մտքով անցնում ենք նոյն ժամանակաշրջանի ամենախոշոր եղբայրութիւնները, առանց փորձելու նոյն գումարը կազմող բոլոր ժամանակամիջոցները մտքում վերարտադրելու։ Ոչ ոք չի կարող ասել, թէ՛ ներկայ դարի և Ա. դարի Բ. յ. միջի ժամանակամիջոցը ըմբռնում է իբրեւ աւելի երկար մի շրջան, համեմատած ներկայ և տասներորդ դարերի միջի ժամանակամիջոցի հետ։ Ճիշդ է, պատմագէտի երեւակայութեան մէջ աւելի երկար ժամանակամիջոցը առաջ է բերում աւելի շատ քանակութեամբ ժամանակագրական թուականներ, և աւելի բազմաթիւ պատկերներ և անցքեր։

ուստի և եղելութիւններով աւելի ճոխ է թւում: Հէնց նոյն պատճառով էլ շատերը հաւատացնում են, թէ անցած երկու շաբաթուայ ժամանակամիջոցը անմիջապէս ըմբռնում են, իբրև աւելի երկար մի շրջան, համեմատած անցած մէկ շաբաթականի հետ: Բայց այստեղ ժամանակի համեմատելիք հայեցողութիւն իրօք բնաւ չկայ: Թուականների և անցքերի աւելի կամ պակաս քանակութիւնը այս դէպքում հանդիսանում է լսկ սիմբոլիկ մի նշան իր բռնած ժամանակի աւելի կամ պակաս տևողութեան համար: Ես համոզուած եմ, որ այս այսպէս է նոյն իսկ այն դէպքում, երբ համեմատելիք ժամանակամիջոցները մի ժամից աւելի չեն, կամ մօտ մի ժամ են: Նոյն բանն է լինում մի քանի մղան երկարութիւն ունեցող տարածութիւնների համեմատելիս. այս դէպքում բազդատման կրիտէրիում է ծառայում տարածութեան բազդատուելիք միջավայրերի պարունակած երկարութեան միաւորների թիւը:

Այժմ բնականաբար դառնանք վերլուծելու ժամանակի երկարութեան մեր գնահատման մի քանի հանրածանօթ տատանումները: Ընդհանրապէս, քազմագան եւ հետաքրքրաշարժ տպաւորութիւններով լցուած ժամանակը ընթանալիս կարճ է թւում, քայց անցնելուց յետոյ մտաբերելիս խիստ երկարատեւ է ներկայանում: Ընդհակառակը, ոչ մի տպաւորութեամբ չլցուած ժամանակը անցնելիս երկար է թւում, իսկ անցնելուց յետոյ կարճ է երեւում: Ճանապարհորդութեան կամ զանազան տեսարաններ այցելելու շաբաթը յիշողութեան մէջ թ շաբաթ է թւում, իսկ հիւանդութեան մէկ շաբաթը հազիւ մի օրուայ տպաւորութիւն է թողնում յիշողութեան մէջ: Անցած ժամանակի վրայ մտքում հայեացք ձգելիս՝ դրա տևողութիւնը պարզ է որ աւելի կամ պակաս է թւում, նայած նոյն ժամանակից առաջ բերած յիշողութիւնների քանակութեանը: Առարկաների, անցքերի, փոփոխութիւնների շատութիւնը, բազմաթիւ ստորաբաժանումները անցեալի վերայ մեր ունենալիք հայեացքը իսկոյն աւելի ընդլայնում են: Անբովանդակութիւնը, միակերպութիւնը, նորութեան բացակայութիւնը, ընդհակա-

ռակը, աւելի սղում են:

Զանի հասակ ենք առնում՝ միևնոյն ժամանակամիջոցը սկսում է մեզ աւելի կարճ թուալ. — այս իրաւացի է օրերի, ամիսների և տարիների նկատմամբ, ժամերի նկատմամբ տարակուսելի է. իսկ լսողներն և վարկեանները, ըստերեղթին, միշտ մօտաւորապէս միևնոյն երկարութեամբ են թւում: Մերունուն իւր անցեալը, շատ հաւանական է, որ երեխայ ժամանակում թւած ից աւելի երկար չէ թւում, թէպէտ իրօք կարելի է 12 անգամ աւելի է: Մարդկանց մեծամասնութեան տարիքուօր հասակի բոլոր անցքերը այնքան սովորական տեսակի են լինում, որ անհատական տպաւորութիւնները նրանց յիշողութեան մէջ երկար չեն պահուում: Միևնոյն ժամանակ աւելի վաղ հասակի անցքերը աւելի և տեղի մեծ քանակութեամբ մտաւորել են սկսում այն պատճառով, որ յիշողութիւնը անկարող է պահել առանձին որոշ պատկերների աւելի մեծ քանակութիւն:

Ահա, ինչ որ աւելի ասելով թէ ինչպէս անցեալին հայեացք ձգելիս, ժամանակը կարծացած է թւում: Ներկայում ժամանակը աւելի կարճ է թւում, երբ այնքան յափշտակած ենք լինում դուրս բովանդակութեամբ, որ չենք նկատում նոյն ինքն ժամանակի հոսանքը: Պայծառ տպաւորութիւններով լի օրը արագ է անցնում: Ընդհակառակը, ակնկալութիւններով և փափօխման գոհացում չտուցած ցանկութիւններով լի օրը մի փոքրիկ յախտեանականութիւն է երևում: Taedium, ennui, Langweile, boredom, ckyka, ճանճրոյթ — բառեր են, որոնց համար ամեն լեզուում էլ համապատասխան տէրմին կը գտնուի: Զանճրոյթ ենք սկսում զգալ այն դէպքերում, երբ մեր փորձի բովանդակութեան յարաբերական ազդատութեան պատճառով մեր ուշադրութիւնը կենդրոնանում է ժամանակի հէնց ընթացման վրայ: Նոր տպաւորութիւնների ենք ուրախում, պատրաստւում ենք ըմբռնել նոցա. դրանք երևան չեն գալիս, դրանց տեղը համարեա ոչնչով չլցուած ժամանակամիջոց ենք դիտակցում: մեր հիասթափումների անընդհատ ըստմութիւ կրկնութիւնների դէպքում ժամա-

նակի տեականութիւնը չափազանց զգալի է դառնում: Աչքներդ փակէք և խնդրէք մէկին, որ ձեզ ասէ, երբ մի բայէ կանցնի. և արտաքին տպաւորութիւնների կատարեալ բացակայութեան այդ մէկ բայէն ձեզ անհաւատալի երկար կ'ըլայ: Ամբողջ բանն այստեղ ուշադրութիւնը նոյն ինքն (per se) ժամանակի զգայութեան վրայ դարձնելն է. այլ և այն, որ ուշադրութիւնը այս դէպքում աւելի գիւրդմբռնող է լինում ժամանակի չափազանց նուրբ ստորաբաժանմունքների նկատմամբ: Սոյնպիսի փորձերում անտանելի է մեզ տպաւորութիւնների դժգոհութիւնը, որովհետեւ փորձի մէջ գրգիռը (возбуждение) հաճոյքի անհրաժեշտ պայմանն է. իսկ դատարկ ժամանակի զգայութիւնը բոլոր փորձերից որ կարող ենք ունենալ ամենից նուազ չափով է մեր զգայութիւնը գրգռող հանդիսանում: Մօլկմանի ասածով, Taedium-ը մի տեսակ քողոր է ներկայի ամբողջ բովանդակութեան դէմ:

4. Անցեալ ժամանակի զգայութիւնը ներկայ է: Ժամանակային յարաբերութիւնների իմացման եզանակի մասին մտածելիս՝ առաջին հայեացքից թւում է, թէ այդ աշխարհիս ամէնապարզ բանն է: Ներքին զգայութեան երեւոյթները միմիանց փոխանակում են մեր մէջ և դիտակցւում են ինչպէս որ կան. հետեապէս, ըստերեւոյթին, կարելի է ասել, որ դիտակցում ենք նաեւ դրանց յաջորդականութիւնը: Բայց դատելու այդպիսի կոպիտ եզանակը իմաստասիրական կոչել չէ կարելի. որովհետեւ մեր գիտակցութեան վիճակների փոխանակման յաջորդականութեան և դրանց յաջորդականութեան զիտակցութեան մէջ նոյնպիսի ահագին անդունդ կայ, ինչպէս և իմացութեան ամեն ուրիշ առարկայի և ենթակայի (օբեկտի և սուբեկտի) մէջ: Զգայութիւնների յաջորդականութիւնը ըստ ինքեան դեռ յաջորդականութեան զգայութիւն չէ: Իսկ եթէ մեր յաջորդական զգայութիւններին այստեղ կցւում է եւ դրանց յաջորդականութեան զգայութիւնը, ապա վերջինս պէտք է ընդունել իօրեւ մի որոշ յաւելեալ հոգեկան երեւոյթ, որ իւր յստուկ եւ աւելի քաւարար քաջատրութիւնն է պա-

հանձնում, քան զգայութիւնների յաջորդականութիւնը նոյն այդ յաջորդականութեան գիտակցութեան հետ նոյնացնող վերևում բերուած մակերեւոյթային բացատրութիւնը:

Քիչ վերև մատնացոյց արինք, որ մեկին ըմբռնելի ամէնամեծ տեղութիւնը 12 վարկենից հազիւ է անցնում, (իսկ ազօտ ըմբռնելի տեղութեան մաքսիմումը հաւանականօրէն մի բոպէից աւելի չէ). ըստ այսմ պէտք է ենթադրենք, որ մեր գիտակցութեան յորձանքի ընթացքում այդ ժամանակամիջոցը ծիշող նկատուում է համապատասխան քնախօսական պրօցէսների մէջ որ եւ է նրբագոյն գծով: Այդ գիծը (ինչ էլ որ այդ լինի) հոգեկան գործունէութեան քնախօսական մեքանիզմում պատճառ է հանդիսանում, որ ընդհանրապէս իմանում ենք ժամանակային յարաբերութիւնները: Այդպիսով, անմիջապէս ըմբռնելի տեղութիւնը հազիւ թէ ուրիշ աւելի բան լինի, քան մեր վերևում ասուած «մօտաւորապէս» ներկան: Այդ ներկայի բովանդակութիւնը շարունակ փոխւում է՝ երեւոյթները նորա մէջ տեղափոխւում են «յետևի» ծայրից դէպի «առջև»-ի ծայրը, և դրանցից իւրաքանչիւրը փոխւում է իր ժամանակային գործակիցը, սկսած «դեռ ոչ»-ից, կամ «դեռ ոչ բոլորովին»-ից, վերջանալով «արդէն», «հէնց նոր»-ով: Մինչ այդ «մօտաւորապէս ներկան», անմիջապէս ըմբռնելի տեղութիւնը, մնում է անշարժ, ինչպէս ջրվէժի վրայի ծիածանը, առանց որակով փոփոխուելու իր միջով անցնող երեւոյթների խառնակման պատճառով: Այս երեւոյթներից իւրաքանչիւրը, գիտակցութեան միջով անցնելով, վերարտադրելի է դառնում և վերարտադրւում է շրջապատող մերձակայ երեւոյթների և սրանց ընդհանուր տեղութեան հետ կապակցուած: Սակայն, խնդրում եմ ընթերցողիս ուշ դարձնել այն փաստին, որ մի անցքի վերարտադրումը յիշողութեան մէջ, «յետև»-ի ծայրից «առջև»-ի-նին կատարելապէս անցնելուց յետոյ, մի հոգեկան երեւոյթ է, որ խիստ տարբեր է նոյն անցքը «մօտաւորապէս ներկայում»՝ իբրև անմիջական անցեալի մի տարկայ՝ դիտելուց:

Կարելի է երևակայել վերարտադրող յիշողութիւնից կատարելապէս զուրկ մի էակ, որ սակայն կունենայ ժամանակի զգայութիւն. միայն թէ այդ զգայութիւնը մի քանի վարկեանի ժամանակամիջոցով սահմանափակուած կլինէր: Յաջորդ գլխում, ժամանակի զգայութիւնը մի անմիջական տուեալ ընդունելով, կըդառնանք վերարտադրող յիշողութեան երեւոյթների վերլուծութեանը և մասնաւորապէս այն երեւոյթների մտաբերութեան, որոնք ժամանակային թափանցների հետ են կապակցուած:

Թուերեկից քարգմանեց ուսանող

Մ. ՍՏԵՓՍՆԵԱՆ

Կ Ե Ն Ս Ս Ա Գ Ի Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Թաղէոս Արքեպիսկոպոսի Բէկնազարեան Առաջնորդ
Հայոց Պարսկաստանի և Հնդկաստանի 1851—1863.

Թաղէոս Արքեպիսկոպոս Բէկնազարեանը, որը տասն երկու տարիներ Պարսկաստանի և Հնդկաստանի հայերի Առաջնորդութիւնը շատ յաջող կերպով կատարել է, ծնուած էր Երևանում տասնիններորդ դարու սկիզբներում, աշխատասէր և համեստ ծնողներից: Հօր անունն էր Մարտիրոս, որը սերուած էր Բէկնազարեան ազգատոհմից: Հէնց մանկական հասակից նրա բնական կայտառութեան և հայկական դէմքի զուարճատիպ գեղեցկութեանը հետ նշմարուում էին նաև աշխոյժ և եռանդ:

Ս. Էջմիածնի միաբաններ Բարսեղ և Ներսէս ¹⁾ արք-

¹⁾ Աշտարակեցի Ներսէս Արքեպիսկոպոսը, որը 1843 թուին Ամենայն Հայոց Հայրապետութեան դահը բարձրացաւ և 1857 փետրվարի 13-ին, 96 տարեկան հասակում վախճանուեց: Բարսեղ Արքեպիսկոպոս ս. Էջմիածնի կաթող. տեղապահն էր: